

Բ.

## ԲՈՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա.ՍՈՐԻՔԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

(Կեմպրիջի համալսարանի ուսուցչապետ Փ. Կ. Բեօրկիստիք\*)

Դասախրանքի Գ.

ՀԻՆ ԱՍՈՐԱԿԱՆ ԱԾՏՈՒՄԱՔԱՆՈՒԹԻՒՆԻՆ:

Աֆրանատ.—Նրա հաւատի հասկացողութիւնը.—Աֆրանատ եւ Տիբիտաւեան վարդապետութիւնն.—Նրա վարդապետութիւնը Ս. Հոգու մասին.—Քրիստոսի մասին վարդապետութիւն.—Եփրեմ առորի.—Carmina Nisibena.—Ս. Եփրեմի բանասեղծութիւնը.—Նրա sermo de Domino nostro.—Խաբբուլա.—Անկումն:

Ասպլիական եկեղեցում մի խմաստուն սովորութիւն է եղել՝ եկեղեցական տարու մեծ տօներին կարդալ Լատիներէն հաւատոյ դաւանութիւնը, որ մեզ յայտնի է Աթանասիան հաւատոյ հանգառ նաև անունով: Այս պատուական դօկումենտը այժմ գործադրում չի: Այն ապացուցանում է, և ոչ ջերմ զգացում արտայայտում Բայց Աթանասի հաւատոյ հանգանակը շատ լաւ ներկայացնում է Գ. և Ե. դարերի մեծ վէճերի էութիւնը, և ևս այսօր իմ ճառի համար նրանից օգտուեցի որպէս մի տեսակ ընազրից: Ինչպէս բոլորդ էլ գիտէք Աթանասի հաւատոյ հանգանակը մեզ սովորեցնում է ասել. «Նման այն բանին, ինչպէս որ, որպէս քրիստոնէական ճշմարտութիւն, պարտաւոր ենք դաւանել իւրաքանչիւր անձն ինքն ըստ ինքիան Աստուած և Տէր, այսպէս և ընդհանրական կրօնքը արգելում է մեզ ասել երեք Աստուած և երեք Տէր<sup>1)</sup>»:

\*) Христианское чтение 1914 г. Июль Августъ. եր. 4005—4026. Сагарда.

1) Եսկականում այս արտայայտուած է այսպէս. Quie sicut singil- latim unomquamque personam et Denm et Dominum confiteri Christiana veritate compellimur ita tres Deos aut Dominos dicere catholica religione prohibemur.

Ընդհանրական կրօնէր վարդապետութեան կենդանի և անընդհատ աւանդութիւնն է, որը սրբերը մի անգամ հաղորդել են յայտնութեան միջոցով. Երիստոնեական նօմարտութիւնը հաւատարիմների՝ դէպի իրանց Տէրը, երկիւղածութեան աստիճանաբար զարգացումն է, որ կատարել են քրիստոնեայ մտածողները, մեկնելով յոյն փիլիսոփայութեան լուսով։ Այստեղ, վերջապէս, ծանօթանում ենք այն ամենի հետ, ինչ որ քրիստոնէի համար անհրաժեշտ սուրբ չի երևում ։ ւրջ և էական հարց է զարթնում, թէ մեր կրօնի արտայայտութեան մէջ որքան դեր է կատարում ոչ թէ Աստուածային յայտնութիւնը, այլ ցանկութիւնը նրան համաձայնեցնել փիլիսոփայական մտքերի հետ, որոնք այն ժամանակ տիրապետում էին երբ քրիստոնէական աստուածաբանութիւնը որոշակի դառնալու վրայ է։ Այսօր փորձում եմ լոյս սփուել մեծ աստուածաբանական վէճների վերայ, հետազօտելով, թէ ինչ էր մտածում քրիստոնէական կրօնի մի քանի հիմնական մասերի վերաբերութեամբ ասորերէն խօսող եկեղեցագէտը (Churcහուո), որ յոյն և լատին մտածողութիւնների մթնոլորտից գուրս էր ապրում։

Մենք չպէտք է վեր առնենք Աղդայի վարդապետութեան միջի քարոզութիւնները, որպէս արտայայտութիւն ասորի աստուածաբանութեան, որովհետեւ տեսմնք, որ այս երկը մի քանի յետնագոյն տարրեր է ըովանդակում, և շատ կարելի է, այդ տարականոն գրքի կազմողը, որ դրել է ՚՚Դ. դարի ամենավերջին, Աղդայի բերանը այնպիսի խօսքեր է դրել, որ մինչև այդ ժամանակ չէին գործադրուել, այլ յերիւրուել են բանակրիւնների տաք ժամանակին։ Փաստ է, որ ներհուն գիտնական Տիկսերոն աբբատը, որ մեծ ուշադրութեամբ հետազօտել է Աղդայի վարդապետութեան մէջ աստուածաբանական բացատրութիւնները, այն եղրակացութեան է եկել, որ նրանց բանաձևերը յետ նիկիական են թէ մտքի և թէ ժամանակի կողմից։ Այդ պատճառով էլ չենք կարող Աղդայի վարդապետութիւնը առնել որպէս նպատակակիտ. բայց ուշնենք մի ուրիշ կարևոր երկ, որ ընդհանրապէս յայտնի է Աֆրահատի ճառեր։ Այս վաստակը զարմանալի կերպով օժտուած է թէ իւր բովանդակութեան և թէ նրա հեղինակի կողմից, որ ծառայի մեղ որպէս ներածութիւն Ասորի հին եկեղեցու աստուածաբանութեան համար։

Աֆրահատը յայտնի է ընդհանրապէս «Պարսկական իմաստուն» անունով և ապրում էր ՚՚Դ. դարի առաջին կէսին Նրա 22 ճառերից կազմուել են 337 թուին, մնացած 12-ը 344-ին, իսկ լրացուցիչ ճառը խաղողի որթի մասին՝ 345 թուին. նա կրօնաւոր և հպիսկոպոս էր։ Մի աւելի յետնագոյն տւանդութիւն ասում է, որ նա Մուսուլի մօտ Ս. Մատթէոսի վանքի վանահայր էր։ Յայտ-

նի է, որ Աֆրահատը 344 թուի ժողովի անդամների թուումն էր, և թէ նրան ընտրեցին, որ ժողովի անունից կազմէ ընդհանրական թուղթը, ուղղուած Աելևիայի և Կտիսիփոնի թեմերի միտրոպոլիտներին։ Յետոյ նա այս թուղթը հրատարակեց որպէս իւր ճառերի 14-ը։

Աֆրահատի մեծ երկի ծրագիրը զարմանալի կերպով յարմարեցրած է, որ ներկայացնի ասորի աստուածաբանութեան ընդհանուր պատկերը Աֆրահատի այն «Ճառերի» մասին ենք խօսում, որոնք յայտնի են այդ անունով և պատահական զրոյցների բնոյթ չեն կրում։ Ընդհակառակն, քրիստոնէական հաւատի այս լրիւ և ուղղակի արտայայտութիւնը, կազմուած է մի երկրորդի հարցերին պատասխանների ձևով։ 22 ճառերը համապատասխանում են սեմիտական այբբենի 22 տառերին, և իւրաքանչիւր ճառը սկսում է այբբենի համապատասխան տառով։ առաջին ճառը ալաֆ-ով, երկրորդը՝ բէթ-ով են։ Այս հասարակ քմահաճոյք չէ, այլ լուրջ մի ձև, ճառերի խսկական կարգը պահպանելու համար։ Անհնարին է տեղափոխել կամ աղաւագել գասաւորութիւնն, խսկոյն այն աչքի կընկնի։ Հստ այսմ, կարծես բաւական չհամարելով այս այբբենական կարգը, 22-րդ ճառի վերջում նորից թւում է բոլոր շարքը ուղիղ կարգով։

Ամենից առաջ պէտքէ ի նկատի առնել Աֆրահատի պաշտօնական գիրքն ու անքիծ վարքը, եթէ կամենում ենք գնահատել այն բանի նշանակութիւնը, որի մասին նա խօսել է։ Ասորիքի յետին գրողները Աֆրահատի մասին, շատ բան չեն կարող ասել քան ինչ որ գիտենք մենք նրա գրածներից։ բայց բոլորը, թէ նեստորականները թէ միաբնակները հաւասար կերպով վկայում են այս՝ Դ. դարի հօր ուղղափառութիւնը։

Հաւատոյ մասին առաջին ճառից սկսենք<sup>1)</sup>։ «Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան», զաւանութեան վերաբերութեամբ էլ նոյնն է, ինչ որ զրուած է առաջին տեղում և հիմնական է գրողի աչքում։ Հաւատը, ըստ Աֆրահատի, նման է շինութեան, որ կազմուած է զանազան գոյների զանազան նիւթերից։ Բայց մեր հաւատի հիմքը, անկեան քարը Յիսուս Քրիստոսն է, ինչպէս ասում են մարգարէները (№ 2)։

1) Այս ճառը ամբողջովին Թարգմանել է դալար ցայտ-ը Nicene and Post-Nicene Fathers հատ. XIII, եր. 543—552։ Այն Թարգմանել է նաեւ գոկ Բայց իւր Ֆիլորմեն հրատարակութեան մէջ, հատ. II, եր. CLXXXV—CLXXXVIII։ Այստեղ արած վերլուծութիւնը այսօրուայ դասախոսութեան համար նիւթերի մի քանի մասերի հետ մրասին առնուած են իմ սեպհական Early Christianity outside the Roman Empire.

Առաջին, մարդս առաջ հաւատում է, յետոյ սիրում, յետոյ յոյս ունենում, յետոյ արդարանում է ու կատարեալ դառնում և շինում տաճար, որի մէջ բնակում է Մեսիան, ինչպէս ասել Երեսմիան, «Տաճար Տեառն, տաճար Տեառն, դուք տաճար Տեառն էք, եթէ ուղղէք ձեր ճանապարհը և ձեր գործերը<sup>1)</sup>, ինչպէս ասաց ինքն մեր Տէրը. «Դուք իմ մէջ էք և ես ձեր (№ 3): Հաւատ ունեցող մարդը կարող է արժանաւոր բնակարան լինել Մեսիայի հոգու համար: Այստեղ պէտք է լինեն պահք, ողորմութիւն, սէր, զթութիւն, հեղութիւն, կուսութիւն, ողջախոնութիւն, խոհականութիւն, հիւրասիրութիւն, խոնարհութիւն, համբերութիւն, համեստութիւն, բեկումն<sup>2)</sup>, ամբծութիւն: Հարուստը այս բոլոր զարդարանքներին կարօտ է (№ 4): Քրիստոսը հաւատի և՛ հիմնադիրն է և՛ հաւատի տան բնակիչը: Երեմիան ասում է, որ մարդիկ Աստուծոյ տաճարն են, իոկ առաքեալները ասում էին, Քրիստոսի Հոգին բնակում է ձեր մէջ: Այդ միևնոյնն է, որովհետեւ Տէրն առաց, ես և իմ Հայրը մի ենք (№ 5): Մարդարէները Մեսիային անուանել են (№ № 6—9) վէմ կամ ժայռ և լոյս (№ № 10—11): Նա է միակ հիմն, որ կարող է դիմանալ կրակին (№ № 12—13): Հաւատը մեզ երկինք է բարձրացրում, փրկում է ջրհեղեղից, ազատում է գերիներին հանգցնում է կրակը, կրակրում է քաղցածին, գերեզմանից յարուցանում է, փակում է առիւծների բերանները, խոնարհեցնում է ամբարտաւանին, բարձրացնում է խոնարհներին (№ 18):

Աֆրահատը չի բաւականանում միայն անորոշ ընդհանրացումով: Հաւատը ջատագովելուց յետոյ նա նրա սահմանն էլ է ճշգում:

«Որովհետեւ, ասում է նա, այն է հաւատը (№ 19).

Երբ մարդ հաւատում է Աստծուն, ամենի Տիրոջը,

Որը ստեղծել է երկինք ու երկիրը, ծովերը և ինչ որ նրանց մէջ կայ,

Որը ստեղծել է Ադամին իւր պատկերով,

Որը տուեց Մովսէսին օրէնքներ,

Որը իւր Հոգին ուղարկեց առաքեալներին,

Որը ուղարկեց աշխարհ իւր Մեսիային:

Եւ եթէ մարդս հաւատում է մեռեալների յարութեանը

Եւ հաւատում է Մկրտութեան Խորհրդին,

Այդ՝ դէպի Աստուծոյ եկեղեցին հաւատն է.

Եւ եթէ մարդս կըզգուշանայ ժամերն ու շարաթներն, ամիսներն ու տարուայ ժամանակները պահելուց

<sup>1)</sup> Երեմ. VI, 45.

<sup>2)</sup> Գանական կեանքի էական բանածեւ.

Կախարդութիւնից, զուշակութիւնից, աստղաբաշխութիւնից,  
հմայութիւնից,

Շնութիւնից, զեղխութիւնից և

Ունայն աղանդներից, չարի գէնք լինելուց ու

Մարդահաճոյ խօսքերից

Աստծուն հայհոյելուց և պոռնկութիւնից.

Եւ եթէ մարդս սուտ չի վկայի և երկերեսանի չի լինի՝

Այդ հաւատի գործ կը լինի, որ կը հանգստացնի

հաստատուն ժայռի վերայ, որ է Մեսիան,

Նրա վերայ է բարձրանում ամեն շինուածք»:

Աֆրահատի հաւատի գաւանութիւն այսպէս է. Նրա համարք  
քրիստոնէութիւնը Ս. Հոգու յայտնութիւն էր, Ս. Հոգու, որ բնա-  
կում է մարդու մէջ և մաքառում է վաս վարքի գէմ, և ոչ թէ  
միայն փիլիսոփայական ձեռնարկութիւն՝ Աստուծոյ բնութեան  
մասին: Ե. դարից տարածուիլ սկսած յոյն և լատին քրիստոնէու-  
թեան յատկութիւնից տարբեր էր այն:

Դրանից մօտ 150 տարի յետոյ, ինչպէս գրել է Աֆրահատը  
Հերապոլսի եպիսկոպոս Փիլոքսէնը, որ Ասորի գիտուն աստուա-  
ծաբան էր, գրել է իւր ճառերը քրիստոնէական կեանքի և յատ-  
կութեան մասին: Նա նոյնպէս սկսել է քրիստոնէական հաւատից  
և յոյս է ունեցել լաւ ճշգել այն: Ահա թէ ինչ է ասում նա<sup>1)</sup>.  
«Աստուծոյ մասին այս բոլորը հաւատի միջոցով դու լսեցիր, թէ  
նա նախ քան զյաւիտեանս է և անվախճան, և թէ նա ինքն իւր  
մէջ գոյութիւն ունի, թէ նա ուրիշեց չէ ստեղծուել, և թէ նա մի  
անձն չէ, այլ գոյութիւն ունեցող էութիւն է, որին հաւատում և  
դաւանում են թէ նա երեք անձն է: Եւ, բացի սրանից, անձերի  
վերաբերութեամբ հաւատի խօսքը ուսուցանում է քեզ ասել: Թէ  
նա, որ ծնաւ, չանչատուեց, և թէ նա՝ որ ծնաւ՝ չանչատուեց,  
այլ Հայրը համագոյակից է իւր որդուն ըստ բնութեան և  
նախ քան զյաւիտեանս՝ Ս. Հոգու հետ, որ նրանց հետ բնութե-  
նակից է»: Եւ այսպէս շարունակում է, որովհետեւ, որքան որ կար-  
դացել եմ, այնուհետև քննում է քերովքէների բնութիւնը և թէ  
ինչ պէտք է մտածել նրանց հոգեոր վիճակի մասին: Փիլոքսէնի  
գրուածքում հաւատը դադարում է դառնալ կհնդանի ամբողջ  
անձնաւորութիւն, այն դառնում է զլիսի և ոչ սրտի գործ, աւելի  
աստուածաբանական ձեր տուարկայ, քան բարոյական պարտք:

Ինչպէս ասորիների նոյնպէս և մեզ համար յոյների փիլի-  
սոփայութիւնը մտքի անյարիր ձե է, և հաւատը, որ արտայայւում

1) Budgés Philoxenuy I, 32 (Անգլ. Թարգմ. II, 29):

էր օտար կամ անպէտք փիլիսոփայութեամբ, պէտք է որ արհեստական դառնար:

Չպէտք է կարծել, որ Աֆրահատը չէր ընդունում Ելրորդութիւն: Մենք նրանից իմանում ենք, որ ասորական եկեղեցին միւս քրիստոնեայ աշխարհների պէս մկրտում էր Հօր, Որդոյ և Ս. Հոգու անունով, և նրա վկայութիւնը հաստատում է Ադգայի վարդապետութեամբ և ասորական այլ հին դոկումենտներով: «Մարդու զլուխը, ասում է Աֆրահատը, (XXIII 63=Wright 500), Մեսիան է: Ով դու, երբ քո զիսով երգւում ես և այն էլ սուտ, եթէ դու քո զլուխն ես համարում երեք մեծ և փառաւոր անունները, Հօր, Որդու և Ս. Հոգու, եթէ ընդունել ես կհանքի կնիքը, միով բանիւ, եթէ քո վերայ մկրտութիւն կատարուել է, մի երդուիր քո զիսով: Կամ նորից (XIII 60=Wright 496): Ով կարող է ասել երկնքից վերև ինչ կայ, երկրի տակ ինչ է ընկած. ոչ ոք չի կարող ասելու Երկնային հաստատութիւնը ինչի վերայ է ձգուած, կամ երկինքը ինչից է կախուած: Երկիրը ինչի վերայ է յենուած, կամ խորութիւնը ինչի վերայ է հաստատուած: Մենք առաջ հնք եկել Աղամից և մեր զգայարաններով սակաւ բանք են հասկանում: Մենք միայն գիտենք, որ Աստուած մէկ է և մէկ նրա Մեսիան՝ և Հոգին՝ մէկ, և մէկ է հաւատը և մէկ է մկրտութիւնը: Ել պէտք չէ շատ խօսել. եթէ աւելի խօսենք՝ կը սխալուենք: Եթէ քննունք՝ անճար կը մնանք»: Ել կարիք չունեմ յիշեցնելու ձեզ, թէ «քննութիւնը» (investigation) որի մասին խօսում է Աֆրահատը, շահագործութիւն և փորձնական նմանութիւն չէ ճիշդ փաստերի, այլ համբերատար և համեստ յարադրութիւն:

Ես պէտք է ցոյց տամ ձեզ Աֆրահատի վարդապետութեան մէջ մի նշանաւոր գիծ Ս. Հոգու մասին: Եթէ հաւատոյ հանգանակի մէջ խօսում ենք Տիրոջ մասին՝ որ կենդանատու է, ուրիմն պէտք է գիտենանք Ս. Հոգու սեռը: Մենք պէտք է ընտրութիւն անենք Տիրոջ և Տիրունու մէջ: Յունական ուշադրաւութեան մէջ, ի հարկէ հասարակ սեռի է: Բայց սեմիտական լեզուում հասարակը սեռ չկայ: և Բնի մի բառ է, որ նշանակում է հողմ և շունչ՝ իգական սեռի է: Այս պատճառով էլ ասորի հնագոյն գրականութեան մէջ, որքան որ յունական աստուածաբանութեան ազգեցութիւնը զգալի էր դառնում, այնքան էլ Ս. Հոգու մասին խօսուում էր իգական սեռով: Յովհաննու ԽIV 26 ասորի հին թարգմանութեան մէջ, յիշաւի, կարդում ենք. Ս. Հոգի, միսիթարչուհին, կը սովորեցնի ձեզ ամեն բան<sup>1)</sup>:

1) Պեշիտայի մէջ իգականի տեղ արական է դրուած, այլ տեղ՝ որ իգական սեռի Թողնելը համարուել է ոչ ուղափառական (— Դուկ. XII 42): Սակայն Պեշիտայի մէջ իսկ շատ տեղ պահուած է իգական սեռի, օր. Դուկ. IV, 4. Ցովի. VII, 39.

Ըստ այսմ, համաձայն աւելի հին կիրարկութեան Աֆրա-  
հատը փառաբանութեան մէջ (XXIII 63=Wright 498) գրում է  
«Փառք և պատիւ Հօր և Նրա Որդուն և Նրա կենդանատու Սուրբ  
Հոգուն», ուր «կենդանատու» և «սուրբ» խգական սեռի են գրուած  
հնագոյն ձեռագրերում: Բայց պարսկաստանցի իմաստունն աւելի  
հեռուն է գնում, Աֆրահատի համար այդ միայն քիրականական  
ճշգութեան հարց չէ: «Հրէաների դէմ կուսութեան մասին» խոր-  
հըրդածութեան մէջ (XVIII 10=Wright 354) ասում է նա: «Լսել  
ենք օրէնքներից, թողնի մարդը իւր հօրն ու մօրը և միանայ  
իւր կողջը և լինեն նրանք մի մարմին, իսկապէս այդ մեծ և գե-  
ղեցիկ մարգարէութիւն է: Խոչպիսի հօրն ու մօրն է թողնում  
մարդ երբ կին է առնում: Ահա դրա միտքը. երբ մարդ դեռ չէ  
ամուսնացել, նա սիրում ու յարգում է Աստծուն, որ իւր Հայրն  
է, և Ս. Հոգուն, որ իւր Մայրն է, և նա էլ այլ սէր չունի: Բայց  
երբ կին է առնում, թողնում է Հօրն ու Մօրը, նրանց, որոնց  
մասին խօսեցի, և նրա խորհուրդները այս աշխարհի հետ են, նրա  
խելքը, սիրու նրա միտքը կտրում են Աստծուց. և նա սիրում  
ու աստուածացնում է աշխարհը, որովհետեւ մարդը սիրում է իւր  
երիտասարդութեան կինը և նրա սէրը դէպի կինը տարրեր է  
դէպի Հայրն ու Մայրը սիրուց»:

Նորից կը դառնանք Ս. Հոգու մասին այս հայեացքին, երբ  
խօսելու լինենք Թովմայի գործերի մասին<sup>1)</sup>:

Պարտաւոր հմ այստեղ յիշեցնել ձեզ, որ գրա համար կայ  
շատ հին քրիստոնէական հեղինակաւորութիւն: Առ Հրէայս հին  
Աւետարանի մէջ, ինչպէս նրանից քաղում են Որոգինէսն ու ս.  
Հերոնիմոսը, մեր Տէրը ինքն է Ս. Հոգուն անուանում իւր Մայր.  
(Որոգինէս Յովհ, Բ. 12 մասին), որ կամենում է ցոյց տալ, թէ  
բոլորը, ինչպէս և Ս. Հոգին, Բանի միջոցով, չի հերքում այս ար-  
տայայտութիւնը որպէս «պարականոն» այլ բացատրում է: Նա  
ապացուցանում է, որ Ս. Հոգին կատարում է Հօր կամքը, ուստի  
և պէտք է նրան իսկապէս նկարագրել որպէս Քրիստոսի Մայր  
համաձայն Մատթէոսի XII, 50: Գուցէ անխուսափելի լինէր, թէ  
Ս. Հոգուն՝ որպէս երկնքի թագուհու մասին միտքը հարկ եղաւ  
ջնջել քրիստոնէական աստուածարանութիւնից, բայց այդ վար-  
դապետութիւնը դատապարտելուց առաջ, որը վրդովում է ժողո-  
վրդական զգացմունքը շնորհիւ բանականութեան սխալ գործա-  
դրութեան դէպի աստուածային էութիւնները, յիշենք, որ այդ

1) Համեմատել նոյնալէս Փիլորսենի ճառը (Եր. 47 անդիիական Թարգ-  
մանութիւն), որը, հաւանօրէն, արծագանքն է կամ Աֆրահատի կամ ողու-  
օրհներդութեան:

շրջանի աստուածաբանութիւնը, երբ նա խպառ անհետացաւ, քրիստոնէական բառարանից դուրս ձգեց Թեօտօհ բառը:

Դառնանք Աֆրահատին: Նրա վարդապետութիւնը Քրիստոսի անձի մասին, ըստ արտայայտութեան նման չէ այն բանաձեին, որ սովորական դարձաւ յիտին ժամանակներում Այսպէս ևս, Աֆրահատի Ա. Հոգու մասին վարդապետութեան պէս այն ևս նոր բան չէ, այլ միայն քրիստոնէական միամիտ հաւատալիքներից մէկի խեշերանքը: Ըստ որում Ժէ. ճառը, որի վերնազիրն է «Յաղագս Մեսիայի, թէ է նա Որդի Աստուծոյ», է Յովհաննու Աւետարանի<sup>1)</sup> նշանաւոր խօսքերից մէկի արձագանքը: Այս ճառը շատերի պէս, որ գրել է Աֆրահատը, ուղղուած է հրէաների դէմ, որոնք ասում էին թէ քրիստոնեաները երկրագութիւն են անում մարդուն, որին Աստուծոյ խօսքին հակառակ, կոչում են Աստուծոյ Որդի: Ես եմ Աստուած և չկայ ուրիշ Աստուած բացի ինձնից (№ 1): Աֆրահատը նպատակ է դնում պաշտպանել քրիստոնէական հաւատալիքը, եթէ հարկ լինէր մինչև անդամ զիջանելով հրէաներին և այն, թէ Յիսուս, որին քրիստոնեաները Աստուած են անուանում՝ միայն մարդ էր: «Թէև, շարունակում է նա, մենք պնդում ենք, որ մեր Տէր Յիսուսը Աստուած է, Աստուծոյ Որդի, Թագաւոր, Թագաւորի Որդի, Լոյս ի Լուսոյ, Որդի<sup>2)</sup> և Խորհրդական, Առաջնորդ և Ճանապարհ, և Փրկիչ, և Հոգիւ, և Դուռն, և Դանձ, և Ճրագ և շատ անուններով ենք կոչում նրան, բայց այժմ ցոյց կը տանք, որ նա Աստուծոյ Որդի է և Աստուած, ծնուած Աստծուց» (№ 2): Որովհետեւ աստուածային անուն էր տրուում արդարներին, օրինակ Մովսէսին, որը աստուած էր ոչ միայն Փարաւոնի, այլ և Ահարոնի համար<sup>3)</sup> (№ 3). և թէև հրէաներն ասում են, թէ Աստուած Որդի չունի, սակայն նա իսրայէլին<sup>4)</sup> անուանեց Իւր անդրանիկ և Սողոմոնին՝ Իւր որդի<sup>5)</sup>: Դաւիթն էլ նրանց համար ասում է. «Ես ասացի, դուք աստուածներ և Ամենաբարձրելոյ որդիքն էք».<sup>6)</sup>: Աստուած տալիս է ամենաբարձր կոչումն նրան, ում կամենում է:

Նա ամբարիշտ նաբուգողոսոսորին թագաւորների թագաւոր կոչեց: Որովհետեւ մարդը ստեղծուել է Աստծուց նրա խկական

<sup>1)</sup>) Յովհ. Փ. 35—36: Քարոզը Թարգմանել է դոկտոր Գյունո-ը կը. 587—592.

<sup>2)</sup>) Sic. հմմտ. Խոայի Թ. 6. նոյնպէս № 9.

<sup>3)</sup>) Ելք 9. 4. Ե. 4:

<sup>4)</sup>) Ելք Դ. 22, 25:

<sup>5)</sup>) Բ. Թագ. Ե. 44. հմտ. Երբ. Ա. 5.

<sup>6)</sup>) Սաղմ. 2Բ. (2Ա) 6:

պատկերի համեմատ, որ լինի տաճար, ուր բնակուէր նա, և դրա համար էլ տուել է նրան այսպիսի պատիւներ, որոնք զլացուած են արեգակին, լուսնին և երկնային զինուորութիւններին<sup>1)</sup> (№ 5 և 6): Ստեղծուածներից ամենից առաջ Աստուած մարդուն յղացաւ իւր մտքում<sup>2)</sup>, թէնա քանի որ աշխարհը նրա համար պատրաստուած չէր, աշխարհ չըերուեց (№ 7): Ինչու չպէտք է մենք երկրպագենք Յիսուսին, որի միջոցով ճանաչեցինք Աստծուն, Յիսուսին, որ դատարկ մնահաւատութիւնից ազատեց, վերստին շնորհեց մեր խոհականութիւնը, սովորեցրեց մեզ սիրել միայն Աստծուն, որ մեր Հայրն է, և երրորդութիւնը, և ծառայել նրան: Միթէ աւելի լաւ չէ այդպէս անել, քան երկրպագել այս աշխարհի թագաւորներին ու կայսրներին, որոնք ոչ միայն իրանք են ամբարիշտ, այլև ուրիշներին էլ դէպի ամբարշտութիւնն են տանում (№ 8): Մեր Մեսիայի, և մինչեւ անդամ խաչելութեան մանրամասնութիւնների մասին խօսել են մարգարէները (№ № 9, 10): Ուստի և պէտք է երկրպագենք նրա Հօր մեծութեան առաջ, որ սովորեցրեց մեզ նրան պաշտել Մովսէսի նման նրան էլ Աստուած ենք կոչում. Անդրանիկ և Որդի՝ Խորայէլի նման, Յիսուս՝ նաւիայի որդի Յեսուսի նման, Քահանայ՝ Ահարոնի նման, Թագաւոր՝ Դաւթի նման, Մեծ Մարգարէ՝ բոլոր մարգարէների նման, Հովիլ՝ հովիւների նման, որոնք պահպանել են Խորայէլին և կտուավարել եւ, աւելացնում է Աֆրահատը, նա մեզ որդի անուանեց, մեզ նրան եղբայրներ դարձնելով, ու մենք դարձանք նրա բարեկամները (№ № 11, 12):

Ուրիշ ոչ մի բան չէր կարող պատկերացնել Աֆրահատի ձեն ու ոճը, ինչպէս այս լրիւ արտայայտութիւնը (ժէ ճառ): Ամենից զարմանալին ու խրատականը Դ. դարում այսպիսի ոգեշունչ երկի հանդիպելին է: Այդ բոլորովին այն չէ, ինչ որ սովորաբար կարդում ենք՝ հայրերի գրուածքներում, բայց այն բոլորը ճիշդ կըրկնութիւններ են մեր Տէր Յիսուսի՝ հրէաներին տուած պատասխանի բառերի, ուստի և գժուար է նրանց ոչ ուղղափառական հայեացք կոչել Պարսկաստանցի իմաստունը հոռվմէական կայսերութեան սահմաններից գուրս էր ապրում, և դաստիարակուել էր այնպիսի քաղաքակրթութեամբ, որ շատ քիչ էր տոգորուած յունական քաղաքակրթութեամբ: Նա չէր զգում մասնի առ ամբողջնուզի յարաբերութեան տրամաբանական ենթակայութիւնը և անհրաժեշտութիւնը, որի համար ամբողջ մարդկութիւնից առաջինը յոյներն էին մաքառում:

Խոստովանում եմ, Աֆրահատի ջանքը ստեղծելու ընդունելի

1) Երկրորդ Օրէնք Պ. 47:

2) Սաղմ. Դ. (20) 1, 2.

քրիստոսաբանութիւն իմ մէջ աւելի համակրութիւն են զարթեցնում քան «յոյների անյագ մաքի» ինքնահաւան զերբնականութիւնը, օգտում եմ Հուկերի արտայայտութեամբ, նա կարծես զիտէր, որ մարդս չէր կարող կառուցանել տիեզերքի տրամաբանական ընդհանուր գծերը ներկայացնողը, Աֆրահատ քրիստոնէական հաւատի երկու գլխաւոր դրութիւնները այնպէս խիստ էր պահպանում ինչպէս Quicquidque vult հեղինակ: Մի կողմից նա բոլորովին համակուած է «ընդհանրական կրօնի» միաստուածութեամբ, միւս կողմից նրա անձնանութիրութիւնն ու հաւատարմութիւնը Տիրոջը՝ համոզում էր նրան, որ ոչ մի անուն կամ պատիւ, որ ընծայում էին քրիստոնէաները, չէին կարող շատ բարձր լինել Յիսուս Քրիստոսի համար, որով նրանք միացել էին Աստուածային բնութեան հետ: Այս երկու դրութիւնների գործակցութեան վերայ է յենում քրիստոնէական բոլոր աստուածաբանութիւնը, բայց ոչ այն ձևով, ինչ ձևով յարմարեցը էր յոյն-հոռվմէական եկեղեցու գերբնական գիտութիւնը:

«Բարձրագոյն տեղը, որ կարող է երկինքը տալ նրան, նրա աջ կողմն է».

Այս գոչը, այս աղաղակը արտայայտում է քրիստոնէական խզմի պահանջը, իսկ աստուածաբանները ու գերբնականութեան հետամուտները պէտք է պարզեն թէ ինչով է տարրերւում երկինքը Ողիմպոսից կամ Նիրվաննայից:

Աֆրահատի նշանակութիւնը քրիստոնէական բացի մէջ, որ դեռ, ինչպէս իրաւացի կերպով յիշեցնում է մեզ Luisy-ն, պահանջում է եկեղեցագէտից լուրջ խորհրդածութիւն, է այն, որ նա մեզ ցոյց է տալիս թէ կարելի էր պաշտպանել քրիստոնէական դիրքերը պայմանական խօսքերով, տարրեր նրանցից, որ եկեղեցին իւրացւը է իւր անհնապանդ որդի Տերտուղիանոսից և Որիգինէսից:

Այժմ դառնում ենք դէպի այն անձնաւորութիւն, որ ասորի եկեղեցու բոլոր որդիներից, իւր անունով աւելի յայտնի է արևմըտեան աշխարհին, դա Եփրայիմն է, որ սովորաբար Եփրեմ ասորի է կոչում, որ վախճանուեց Եղեսիայում 373 թ. Վաղենտին արիանոսական կայսրի իշխանութեան ժամանակի նրա ծննդավայրը Մծբինն էր, ուր նա ապրում էր մինչև Յովրանոսը յանձնեց 363 թ. պարսիկներին, Յուլիանոս Ուրացողի յաղթուելուց ու մահից յետոյց Եղեսիայում Եփրեմը ապրում էր որպէս ճգնաւոր կամ անապատական քաղաքից զուրս մի խցի մէջ, բայց նրա փառքը, որպիս մեկնիչի և եերեաթիկոսների դէմ մաքառողի իւր կենդանութեան իսկ ժամանակ մէծ էր: Պատմում են, որ նա այցելեց Բարսեղ Կեսարացուն կապադովկիայում և նրանից սարկաւագ ձեռնադրուեց:

Ենչը ստեղծեց Եփրեմի համար այս անսովոր փառքը, դժուար է ասել: Նրա կենսագիրը նրան վերագրում է ժամերգութեանը կցուած մի (բովանդակութեամբ) շատ խեղճ վիճաբանական օրհնաերդ յօրինելու պատիւը: Այժմեան գիտնականների համար Եփրեմի նշանակութիւնը այն է, որ նա Դ. դարի ասորի գրող է: Նրա վաստակները չափազանց ընդարձակ են և լաւ պահպանուած, կարող է տալ մեզ այն եկեղեցու կեանքի և նշանակութեան մի քանի գծերը, որին նա պատկանում էր: Բայց բաւական ձանձրակի գործ է, յարդի միջից ցորենի հատիկներն ընտրելը: Եփրեմ չափազանց ճոխարան է: Նա անվերջ կրկնութիւններ է անում, և նիւթերի ամբողջ զանգուածից կարծես շատ սակաւ բան կարելի է ընտրել: Նրա ոճը այնքան այլարանական է և այնքան անընական, որ միտքը խորի և նուրբի տպաւորութիւն է գործում, բայց երբ բովանդակութիւնը ամփոփւում է, երկում է շատ սովորական և հասարակ: Վեր առնենք, օրինակ Մծրինի օրհներգից ԺՊ. որի վերնագիրն է, «Յաղագս Սրբոյն Յակովբայ և ընկերաց նորա»<sup>4)</sup>: Պէտք է նկատել, որ սուրբ Յակովը Մծրնայ եպիսկոպոսն էր: Նրան յաջորդեց Բաւը, իսկ Բաւին՝ Վալդեղը կամ Վոլոգէզը, որը դեռ կենդանի էր, երբ երեան եկաւ պօչման:

Ա.

Երկու մեծ լուսաւորների նման  
Փառաւոր երեք քահանաները  
Միմեանց էին առաջարկում  
Գահը, իշխանութիւնը և հօտը:  
Մեզ, որ երկուսի համար մեծ վիշտ ունէինք  
Վերջինը կատարեալ միիթարութիւն դարձաւ:  
Փառք քեզ, որ նրանց ընտրեցիր:

Բ.

Նա, Որ ստեղծեց երկու մեծ լուսաւորներին  
իւր համար ընտրեց երեք մեծ լուսատուներ:  
Եւ ուղարկեց նրանց երեք բոնուած խաւարներին,  
Որոնք խորտակուեցին:  
Երբ երկու լուսաւորները շիջան  
Վերջինը բոլորովին ճառագութալիր էր:  
Փառք քեզ են:

Գ.

Երեք հովիւներ էին նշանակուած,  
Անմերձենալի պահպանելու  
Երրորդութեան բանալիները:

Նրանք երեք դուռ բաց արին մեզ.  
Այէն մէկը իւր բանալիով  
իսկ ժամանակին բաց արեց իւր դուռը  
Փառք քեզ . . .

Դ.

Առաջին բանալիով բաց եղաւ դուռը  
Երկու զօրքերի զօրականներին,  
Միջին բանալիով բաց եղաւ դուռը  
Երկու հողմերի թագաւորին,  
Երրորդ բանալիով բաց եղաւ դուռը  
Երկու կողմերի դեսպաններին:

(Կարծւում է, որ այս տողերը կարդացողը կիմանայ, որ Յակովի եպիսկոպոսութեան ժամանակ արևմտեան կողմից հռովմայեցիների և արևելքից՝ պարսիկների միջև սկսուեց պատերազմը, որ շարունակեց Բաւի եպիսկոպոսութեան ժամանակ, և հաշտութիւնը նրա յաջորդ Վողոգէսի ժամանակ եղաւ: Ես բաց եմ թողնում 12 տող, որ նման են այն տողերին որ մէջբերի և անցնում եմ Ն Ժ. -ին):

ԺԼ.

Ջրերի մօտ գտնուող Մծրին,  
Յայտնի և ծածուկ ջրերին:  
Նրա մէջ կան կենդանի աղբիւրներ,  
Ազնիւ գետը նրանից դուրս է  
Նրանից դուրս գետը նրան (Մծրինին) վասաց  
Բանալին նրա (գետի) մէջ պահպանեց նրան:

ԺԹ.

Նրա (Մծրինի) առաջին քահանան էր նա այգեպանը  
Նրա (Մծրինի) ոստերը աճեցրեց նա մինչև երկին:  
Նայեցէք, երբ մեռաւ և թաղուեց նրա մէջ,  
Այն ժամանակ նա պտուղ տուեց:  
Որովհետև երբ եկան ոստերը յօտողները  
Նրա (Մծրինի) մէջ եղած պտուղը փրկեց նրան (Մծրինի),

Ի.

Հասաւ ժամանակը ոստերը յօտելու,  
Նա (ժամանակը) եկաւ և առաւ նրա (Մծրինի) այգեպանին:  
Որ նա (Մծրինը) չունենայ պահպան,  
Նա (Մծրինը) շտապեց և իւր շըջահայեցութեամբ

Թագրցրեց իւր գրկում այգեպանին,  
Որ նա (այգեպանը) կարողանայ փրկել նրան (Մծրինին):

ԻԱ.

Նմանեցէք, դուք խելօքներ,  
Մծրինի զուստրներ, նմանեցէք Մծրինին,  
Որը իւր մէջ թագցրեց դին  
եւ այն (դին) դարձաւ նրա պարիսպը:  
Ստեղծեցէք ձեր մէջ կենդանի դի,  
Որ այն կարողանայ ձեր կեանքի համար պարիսպ լինել:

Վերջին տողերի միտքն այս է. Մծրինի եպիսկոպոս Ս. Ցակովը, կենդանի ժամանակ պաշտպանում էր Մծրինին իւր աղօթքով: Երբ նա մեռաւ և քաղաքում թաղուեց, նրա մասունքը նոյնպէս դրծում էին, և պարսիկներին հայածում:

Ես բերի սուրբ Եփրեմի բանաստեղծութեան այս նմուշը ոչ թէ նրա համար, որ այդ աւելի գեղեցիկ կամ ներշնչեալ համարեցի, այլ նրա համար, որ այն շատ բնորոշ է: Ի հարկէ, ասորի բնագրում այն աւելի գեղեցիկ է: որովհետեւ ասորի բնագիրը ոտանաւոր է: Բայց որքան կարող եմ դատել, նա (սուրբ Եփրեմը) բառեր ընտրելիս՝ նրբանաշակ և վարպետ չէ. Գլխաւոր միտքը որ է հանգուցեալ եպիսկոպոսի մասունքի ցոյց տուած հովանաւորութիւնը, հրապոյր չունի Ցիշեցէք, որ ամբողջ վիպերգը (պօէմա) ձգձգած է մինչև 22 տուն, որից կարդացի ձեզ միայն 8 տուն կրօնական գրականութեան կանոնով դատած, այդ գործը պէտք է աննշան համարել: Բայց գեռ միանգամ էլ պէտք է յիշենք, որ հեղինակը վաստակի է մեծ և յարատե փառք: Բանաստեղծութեան այդ ձեզ, հաւանօրէն, համապատասխանում էր այն ձկին, որ Դ. դարում պահանջում էր եկեղեցին: Եթէ այդ հասարակութեան ճաշակի աւաղելի օրինակն է, ուրեմն մեզ մնում է գնահատել, թէ այդ շրջանը քննելիս՝ որ աստիճան գտնւում ենք մտքի ուրիշ շրջանի ազգեցութեան տակ:

Մի բանում պէտք է գնահատենք ս. Եփրեմին: Նրա հեզութիւնը բոլորովին անկեղծ էր: Մենք տեսանք նրա հաւատը մասունքների վերաբերութեամբ: Նա իւր հիտաքրքիր վաստակի մէջ, որ յայտնի է որպէս նրա կտակ կամ կամք՝ նա երդուեցնում է իւր աշակերտներին, որ իրան չթաղեն եկեղեցում բեմի տակ կամ հին նահասակների ու վկաների մէջ, որ թաղեն ընդհանուր գերեզմանոցում օտարների մէջ, փաթաթած հին վերաբերուով:

Այստեղ տեղը չէ ընդհանուր վերլուծութեան ենթարկել ս. Եփրեմի վաստակները կամ վերստուգել անագին նիւթերի իսկու-

թիւնը, նիւթերի, որոնք զանազան ժամանակներում հրատարակուած են նրա անունով։ Բայց մի կէտում հարկաւոր է զգուշութիւն։ Ես արդէն նախընթաց դասախոսութեան մէջ յիշեցի, ինչ որ որոշուած է ու համարւում է ու Եփրեմինը, դրա որոշ մասը նրանը չէ, իսկ իմ քիչ առաջ տուած նմուշից տեսաք, որ նրա իսկական ոճից չի կարելի դուրս բերել իսկական հաւաստիք ուր անհրաժեշտ լինէին նրա դաւանական գիրքը լուսաւորելու համար։ Յամենայն դէպս, յենուելով այն մտքերին և բառերին, որ մէջ բերուցին որպէս Ս. Եփրեմի բառեր կամ նրա ժամանակի ու երկրի դաւանական հաւատալիքի լուսաբանութիւն անհրաժեշտ է առանձնապէս պնդել, յիրաւի՞ դրանք վեր առնուած են իսկական երկերից և կասկածելի չեն։ Օրինակի համար յիշեմ, որ հինգ քաղուածներից, որ առել է հանգուցեալ դոկտոր Moberly դոկտոր Rusey շատ լաւ յայտնի հաւաքածոյից՝ Ս. Եփրեմի Հաղորդութեան մասին վարդապետութիւնը լուսաբանելու համար, ոչ մէկն էլ Ս. Եփրեմի շարադրութիւնների ճշգուած իսկականներից չէ առնուած, և ես չիմ կարծում, որ գոնէ մէկը նրա գրչին պատկանէր<sup>1)</sup>, թէև շատ նման մտքերը կարելի էր փոխ առնել Ս. Եփրեմի վաստակների իսկականներից։

Ուրեմն կենդրոնանանք Ս. Եփրեմի այն վաստակների վերայ, որ անկասկած են։ Չեր համար կարծեմ բաւական է նրա բանաստեղծութիւնը, անցնինք այժմ ընդարձակ գրուածքներին։ Հետաքրքիր է, որ Ս. Եփրեմի ընդարձակ դրուածքները աւելի են կարդացում քան նրա ոտանաւորները։ Ընդարձակ գրուածները կարդալիս մենք չենք յոզնում ձգձգուած նախադասութիւնների շարքերով, որոնցով նրա ժամանակակիցները, ըստ երևոյթին, սքանչանում էին այնպէս, ինչպէս զրական աշխարհը Յակովը Ա.-ի ժամանակ հիանում էր Դոննայ և Քարլի (Donne and Quarles) վրայ։

Ս. Եփրեմի իսկական աստուածաբանութիւնը լաւ ուսումնասիրում է այն երկով, որ կոչում է Sermo de Dominon nostro, որ հրատարակել է Lamy<sup>2)</sup>։ Այդ երկը մարդեղութեան մասին մի խորհրդածութիւն է։ Յետնազոյն գրողները, ինչպէս Փիլոքսընը, նրանից քաղուածներ են անում որպէս աստուածաբանական ընդունուած հեղինակաւորութիւնից։ Այն ասորիններին յայտնի եղաւ բռներով։ — «Գթութիւնը հպաւեց աստուածուրացների շրթունքին և նրանց փառարանող տաւիդ դարձրեց։ Ուստի և թող օրէնին նրան բոլոր բերանները, որովհետև նա աստուածուրաց զրոյցնե-

<sup>1)</sup> See Journal of Theol. Studies II եր. 344.

<sup>2)</sup> Lamy I. 445—274. տես նոյնպէս նախարանը 2-րդ հատորի ձառը Թարգմանել է A. E. Johnston Gwynn. եր. 505—550.

ըից պահում է։ Փառք քեզ, որ գուրս ես եկել մի բնակարանից և բնակուել ես մի ուրիշի մէջ, որ գաս և մեզ դարձնես բնակարան նրա համար, Որը ուղարկեց Քեզ։ Միածինը հեռացաւ Աստուածային էութիւնից և բնակուեց Կոյսի մէջ, որ սովորական ծննդեամբ բոլորի եղբայրը դարնայ։ Եւ այս նա էր, որ ելաւ դժոխքից ու բնակուեց արքայութեան մէջ, որ գտնի ամենքին ճնշող դժոխքից գուրս գալու ճանապարհը դէպի այն արքայութիւնը, որը վարձատրութիւն է ամենի համար. որովհետև մեր Տէրը մահկանացու մարդկանց տուեց իւր յարութիւնը որպէս առ հաւատչեայ, թէ նրանց կը փոխադրի մեռնողներին անխտիր ընդունող դժոխքից՝ դէպի արքայութիւն, որ ընդունում է նրանց, որոնք ընտրուած են, որ ուր դիմում են հաւասարապէս բոլոր մարդկային մարմինները, և նրանք կարողանային դնալ այնտեղ, ուր գործերը քննւում են։ Եւ նորից շարունակում է, ասելով. «Նա, Միածինը, ծնուածը ըստ իւր (Աստուածային) բնութեան, ծնուեց այլ (մարդկային) ծնընդեամբ, բացի նրանից, որ բնական էր նրա համար, որ մենք էլ մեր հերթին իմանայինք, թէ մեր բնական ծննդից յետոյ, մեր համար հարկաւոր է այլ ծնունդ՝ բացի նրանից, ինչ որ բնական է մեր համար։ Որովհետև նա, որպէս հոգեոր էութիւն, քանի դեռ չէր ծնուել մարմնով, չէր կարող մարմին դառնալ։ «Ի՞նքն մեր Տէրը», ասում է Եփրեմը, ծնուել էր Աստծուց, ըստ իւր յատուկ բնութեան։ Նա ծնուեց մարդուց հակառակ իւր բնութեան (հրաշալի կերպով), և նա անսօվոր կիրպով ծնուեց մկրտութեամբ։ Այդ այն է նշանակում, որ մենք կարող ենք ծնուել մարդուց ըստ մեր բնութեան և Աստծուց՝ հակառակ մեր յատուկ բնութեան և Ռ. Հոգուց՝ անսօվոր կերպով։ «Փառք քեզ», ասում է նա նորից, «Որ Քո խաչը մահի վերայ կամուրջ դարձրիր, որ նրա վրայով հոգիները կարողանան մահուան տանից կեանքի տունը անցնել։

Այս հատուածից, կարծիմ, կարող էք երևակայել Ս. Եփրեմի խորհրդածութեան մէջ եղած մտքերի գլխաւոր մասը։ Հստ Ս. Եփրեմի, մարմառութեան, Աստծոյ՝ մարդ դառնալու նպատակը այն էր, որ քրիստոնեաները կարողանան ընդունել Աստուածայինը իրանց մարդկային լուսութեան մէջ։ Կարող ենք նկատել որ, ըստ Եփրեմի, Քրիստոսի բնութեան մասին վարդապետութիւնը և խորհուրդների մասին վարդապետութիւնը անբաժան շաղկապուած են։

Յիսուս Քրիստոսը Ս. Հոգին ընդունեց մկրտութեան ժամանակ, որ մենք էլ կարողանանք ծնուել Ս. Հոգուց։ Նա «Կենսաւու էլէքսիրն (դեղահատ) է որին կլեց<sup>1)</sup> մահը՝ բայց չկարողացաւ մարսել, այլ խօսքով, Նա քարմառու տղի ձմառաւած, որի մասին խօսաւում է իդնատիոսը (աճ. Eph. XX), Նրանով բացուել են դժոխքի

դռները և ազատուել են Հին Կտակարանի նահապետները։ Բայց Եփրեմը այս նախաղասութիւնը գործ է ածում փոխարերաբար «Մեր տէրը», ասում է նա, «ուտողների ու խմողների հետ նիստ ու կաց էր անում ոչ թէ հաճոյքի համար, ինչպէս կարծում էին Փարիս սեցիները, այլ նրա համար, որ մահկանացուների կերակուրի հետ կարողանայ խառնել իւր վարդապետութիւնը որպէս կեանքի դեղ»։

Իսկապէս շատ դժուար է Ս. Եփրեմի վաստակներից պարզ գաղափարներ դուրս բերել։ Նա մի նշանաբանից միւսն է անցնում, և այն կէտերը որ նա յատուկ կարեոր է համարում, երբեմն վիճելի են, երբեմն անհեթեթ, բայց միշտ էլ երեակայական։ «Մեր Տէրը», ասում է նա<sup>1)</sup> «թքեց իւր մատներին և կոխեց խլի տկանջները և իւր թքով կաւ շինեց ու քսեց կոյրի աշքերին, որ մենք կարողանանք իմանալ թէ նրա մարմի խմորմամբ կատարելագործում է ամեն բան, և ինչ որ մեր մարմի մէջ պակաս է լրացւում է։ Անարդար կը լինէր մեր Տիրոջ մարմնից մի բան կտրել, որ լրացնէիք ուրիշ մարմինների թերութիւնները»։

Բայց այն բանով, որը կարող էր առանց իւր համար կուրուստ պատճառելու վեր առնուել, նա լրացրեց անկատարի թերութիւնը, որ մահկանացուները ուտեն ճաշակեն այն, ինչ որ նրա մարմից կարելի է ուտել։ Ըստ այսմ, նա լրացրեց այն, ինչ որ պակաս էր, և կենդանացրեց մեռածին, որ մենք կարողանայինք գիտենալ թէ, մարմից, որի մէջ բնակում է ճշմարիտ լրութիւնը, լրանայ այն՝ ինչ որ պակասում է անկատարին, և որ այդ իսկ մարմնից, որի մէջ բնակում է իսկական կենսատու ոյժը, կեանք տրուի մահկանացու մարդունց Ռւբեմն Ս. Եփրեմի Հաղորդութեան մասին վարդապետութիւնը այն է, որ պէտք է զնալ իսկապէս մերձենալ Տիրոջը և ճաշակել նրան, որ չնորհում է քրիստոնեաներին ճշմարիտ կեանք ու առողջութիւն այնպէս, ինչպէս նիւթական մերձեցումն նրա հետ տուեց լսողութիւն խլին և տեսողութիւն՝ կոյրին։ Եփրեմի ոճի մթութիւնը հարկադրում է մտածել, թէ հեղինակը հոգեոր սնունդի մասին է խօսում, բայց Հաղորդութեան հացի համեմատութիւնը նիւթական թուքի հետ մտածել է տալիս, թէ Եփրեմը գլխաւորապէս ի նկատի ունէր սրբագործուած նիւթերի պարզ ճաշակումն։

Ս. Եփրեմի քրիստոսաբանութեան միւս յատկութիւնը նրա հետաքրքիր վարդապետութիւնն է, որ կարող ենք անուանել Charismata, այսինքն, հոգեոր արտօնութիւններ, որոնք որպէս թէ միայն իսրայէլին էին շնորհուած, և ապա իրար ետեւից խլուած նրանց իսկապէս տիրող Քրիստոսի ձեռքով։ Հինգրիստոնէական աստուածաբանները բոլորովին հաւատացած էին ճրէական նուիրապետութեան օրինական լինելուն, Հրէաների

թագաւորը ճանաչւում էր Տիրոջ օծեալ, հրէայ քահանան—Աստուծոյ օրինական պաշտօնեայ, հրէայ մարգարէն Ս. Հոգու բանբերը Մեր Տէր ի՞նչպէս տուեց իւր աշակերտներին քահանայութեան իշխանութիւնու Ռումից ստացաւ Նա երկնքի թագաւորութեան բանալիները ու տուեց Ս. Պիտրոսին<sup>1)</sup>: Հետաքրքիր է, որ Ս. Եփրեմը, դոնէ մի վայրկեան զարմանում է, թէ Թրիստոսի հաստատած կոչումները ի՞նչպէս ունեցան ոյժ: Նրա պատասխանը նոյնպէս տարօրինակ է: Ս. Եփրեմը մեղ ասում է, քահանայութիւնը շնորհուեց մեր Տիրոջը տաճարում, երբ Սիմէօնը Նրան իւր գիրկն առաւ, կամ աւելի ճիշդ, թէ մեր Տէրը քահանայութիւն ստացաւ Սիմէօնից, որը իրեն հաղորդուած շնորհը մերկացաւ և պատրաստ եղաւ արձակուել դէպ ի խաղաղութիւն: «Բատ այսմ, շարունակում է նա, Որդու համար, պատրաստուած շնորհներից ամեն մէկը, նա ժողովեց նրանց իսկական ծառից: Մկրտութիւնը առաւ Յորդանանից, թէն Յորդաննէոը այնունետեւ շարունակեց մկրտել. քահանայութիւնը առաւ տաճարից, թէն Անսա քահանայապետը շարունակեց այնտեղ պաշտօնավարել, և մարգարէութեան շնորհը, որ բաշխւում էր արդարներին, ընդունեց նա, թէն Կայիափան Նրա (Անսայի) օգնութեամբ պէտք է հիւսէր դեռ մեր Տիրոջ համար պսակ, և նա ընդունեց թագաւորութիւնը Դաւթի տանից, թէն Հերովդէսն էր զարձել նրա (Դաւթի) փոխանորդը: Այդ նա էր, մեր Տէրը, որ երկնքից երկիր էր իջել, և երբ բոլոր շնորհները, որ նա շնորհել էր նրանց հին ժամանակներում տեսան Նրան, մօտ թռան, մօտ եկան ամեն կողմից և զեղուեցին Նրան՝ իրանց շնորհողի վերայ, հաւաքուելով բոլոր կողմերից, դալու և արմատանալու իրանց իսկական ծնող ծառի վերայ.... Բայց երբ մեր Տէրը ընդունեց Խորայէլից քահանայութիւնը, նրանով սրբեց բոլոր ժողովուրդներին. երբ ընդունեց մարգարէութեան շնորհը, իւր խոստումները յայտնեց բոլոր ժողովուրդներին: երբ դրեց իւր պսակը, կապեց հզօր մարդուն, որ զերել է բոլորին և նրա աւարը բաժանեց: Այդ շնորհները անօգուտ էին անպտուղ թղինու համար, այն աստիճան անպտուղ, որ անօգուտ դարձրեց նոյն իսկ նրա նման շնորհները. զրա համար էլ առանց պտուղների կտրուեց, որ այդ շնորհները տարածուեն և այնունետեւ տան շատ պտուղներ բոլոր ժողովուրդների մէջ:

«Դրանից աւելի, ասում է Եփրեմը իւր եղբակացութեան մէջ, բոլոր բնակարաններից հեռացաւ նա, Որը եկաւ որ մեր մարմինները իրան բնակարան դարձնի: Թող մեզնից ամեն մէկը բնակարան դառնայ, որովհետեւ, ասում է նա: Ով ինձ սիրում է,

1) Այս հարցը յիրաւի դրել է Lamy I. 267:

ես նրա մէջ կը մտնեմ և նրան ինձ բնակարան կը դարձնեմ։ Այդ Աստուածութիւնն է, Որին ճանաչելու համար, (թէկ բոլոր ստեղծուածները չեն ճանաչում Նրան), բաւական է հեզ և խոնարհ բանականութիւնն ։

Այս անսովոր եզրակացութեան մէջ բարեպաշտութեան և հոգևոր կեանքի մասին ակնարկութիւնը, առիթ է տալիս դատել, որ Ս. Եփրեմի փիլիսոփայական և երևակայական առարկութիւնները թոյլ են։ Փիլիսոփայութիւնը յիրաւի, թոյլ է, իսկ առարկութիւնները չափազանց երևակայական։ Ափրահատը երբեմն ստիպում է մեզ ցանկանալ, որ եկեղեցին բաւականանար պահպանելով նախկին ժամանակների պարզ աստուածաբանութիւնը։ Ս. Եփրեմը մեզ ցոյց է տալիս, որ եկեղեցու հաւատը պաշտօնապէս արտայայտելու համար պէտք է խիստ կարգ և ճշգութիւն։ Առանց հաւատոյ հանգանակի Ս. Եփրեմի աստուածաբանութիւնը, կարող էր, կարծում եմ, ասորական եկեղեցին տրիտէյզմի մէջ ձգել։ «Մարդը, ասում է նա, անօդնական չէ թողնուած։ Հայրը զրահաւորում է նրան, Որդին վահանի տակ է բռնում նրան, Հոգին օգնում նրան կռուի մէջ»։ Այդպիսի արտայայտութիւնները կարող են ներետքիկոսական չլինել. բայց նրանից վտանգաւոր են, դրանք հոեստորական են, իսկ հոեստորութիւնը աստուածաբանութեան մէջ տանում է դէպի սնահաւատութիւն։ Աստուծոյ էութիւնը որոշել, արտայայտուած մարդկային լիզուով, լաւագոյն դէպքում, մնում է անորոշ նախազգացում։ Միակ գնահատելի վարդապետութիւնը Երբորգութեան, Քրիստոսի աստուածային և մարդկային բնութեան մասին այն է, որ օգնում է մեզ պակաս թերութեամբ ներկայացնել մեր յարաբերութիւնը մեզնից զուրս խորհրդաւոր Ոյժի միջն, Որ կառավարում է աշխարհ։ Ոյժի, Որին Յիսուս Քրիստոսի միջոցով սովորել ենք կոչել Հայր։ Սրանման վարդապետութիւնները կամ յարգանքի են արժանի, կամ պէտք է վճռաբար մերժել բայց, ով ընդունում է այդ վարդապետութիւնները նրանց հետ հանաք չպէտք է անի նրանք գրաւում են միտք, ուր տեղ պէտք է չունենան «գեղեցիկ երեակայութիւնները. իսկ Ս. Եփրեմը լի է այդպիսի երևակայութեամբ։

Նրա վաստակների հոռոմէական հրատարակութեան 6 հատորներից իւրաքանչիւրի սկզբում զետեղուած է 18-դ դարի ոճով հիանալի փորազրութիւն, Սրբի պատկերով, որ նստած է սաղարթախիտ ծառի տակ, երկնքից իջած թեաւոր փոքրիկ ամուրների հետ, որոնք ձեռքներին ունին ներշնչութեան գալարածոյ թուղթ։ Սուրբը հեղութեամբ ընդունում է այդ գալարածոյները այն ժամանակ, երբ ետևում նրա աշակերտները զարմացած նայում են հրաշքին։ Այդ բոլորը լաւ է, և ճիշտ չէ միայն այն պատճառով,

որ չի համապատասխանում իսկութեան: Նոյնը կարելի է ասել և Ս. Եփրեմի աստուածաբանութեան մասին: Այդ աստուածաբանութիւնը զուգընթաց չէ իսկութեանը, այն չի տալիս մեզ ոչ պատմական Քրիստոսին, ոչ Քրիստոնէութեան առաջին եկեղեցին, և ոչ էլ յետին ժամանակի պարզ ու որոշ վարդապետութիւնը: Միով բանիւ Ս. Եփրեմը պատկերացնում է այն անցողական շրջանը, երբ ապրում էր նա: Նրա վարդապետութեան մէջ հոգևոր լրջութեան զգալի պակասութիւնը պարզօրէն բացատրում է, թէ ինչու եկեղեցին, որ Ռարուլայի ժամանակ խիստ ուղղափառ էր գարձել, 100 տարի յետոյ հետզհետէ ընկաւ անուղղափառութեան և հերձուածի մէջ<sup>1)</sup>:

Ռարբուլլայի հոգեոր շրջապատը, ի հարկէ, շատ տարբեր էր քան այն շրջապատը, ուր ապրում էր Ս. Եփրեմը: Երկուքն էլ խստակրօն էին, բայց այստեղ նմանութիւնը վերջանում է: Ռարբուլլան պարզ և կանոնաւոր եկեղեցականութեան մարմնացումն էր: Զգիտեմ այլ կերպ կարելի՞ է աւելի լաւ լուսաւորել Նրա դիրքը, քան քարոզը, որ, ասում են, տուել է Կոստանդնուպոլսում եկեղեցու մէջ, երբ Նեստորը գեռ պատրիարք էր<sup>2)</sup>: «Երկու զլիսաւոր պատուիրան կայ. իմ սիրելի եղբայրներ, ասում է նա, այն ինչ որ կրկնում են օրէնքն ու մարգարէները: Առաջին, որ դու պէտք է սիրես Աստծուն բոլոր սրտով: Ուստի ով սիրում է, չի քննում, այլ հնագանդում է, և չի փորձում, այլ հաւատում է: Աստուծուն միայն խօսքով չպէտք է սիրել, այլ և գործով, որովհետև (ասում է նա) ով սիրում է ինձ պահում է իմ պատուիրանը: Երկրորդն ասում է, որ դու պէտք է սիրես քո մերձաւորին՝ ինչպէս քեզ: Ով սիրում է, չի սպանի, չի գողանայ, չի շնայ, չի ստի, չի հարստանարի, որովհետև ինչ որ չի ցանկանում ոք: որ իրան անեն, չպէտք է ինքն էլ ուրիշին անի և կը վարուի մերձաւորի հետ այնպէս ինչպէս կամենում է, որ վարուեն իւր հետ, որովհետև նա սիրում է նրանց: Այս վարդապետութիւնները մեր հոգու համար փրկութիւն են, եղբայրներ. դրանք այն են, ինչ որ օգտակար են Մեսիայի բոլոր եկեղեցու շինութեան համար: Դրա համար էլ պարտաւոր ենք, նրանց վերայ աւելի ուշադրութիւն դարձնել մեր աշխատանքի մէջ բոլոր ժամանակներում: որովհետև միայն նրանք

1) Յ. Ա. Բեօրկիտտի հայեացքը Ս. Եփրեմի գրական դործունէութեան յատկութեան ու նշանակութեան մասին շատ միակողմանի է:

Խուս բարգմանիշ.

2) Overbeck, եր. 198, I. 21 ի. մէջ բերումն առնուած է: Overbeckից եր. 244 ի: Խոկական բարոզը, հաւանօրէն, արտասանուած է: ասորերէն (եր. 251, I, 42):

են լաւ գնահատում մեր իսկական առաքինութիւնը»։ Այս բոլորը արտայայտուած է բոլորովին Ափրահատի ոճով։ «Բայց, շարունակում է Ռաբբուլան։ որովհետև գիտեմ, որ ձեր ականջները և ձեր ուշադրութիւնը սպասում են լսել մեր խօսքն ու հաւատը, և դուք ցանկանում էք գիտենալ Մեսիայի միջոցով մեր արտայայտումն, մենք էլ ձեր սիրուց հարկադրուած ենք խօսել ձեզ հետ այն առարկաների մասին, որոնք պէտք է համարուած լինեն հաւատոյ դաղմնիք։ Զեր առաջարկած հարցը այսպէս է. «Մարիամ Կոյսը խսկապէս էր Աստուծոյ Մայր, թէ միայն անուանապէս է այդպէս յորջորջուել, պէտք է Նրան Աստուածամայր կոչել»։ Այժմ մենք, ասում է Ռաբբուլան, քանի որ դրա վերայ ենք գրել մեր հաստատուն յոյսը, որովհետև այդ մեր կեանքն է, ու հաւատում ենք դրան՝—որովհետև դրանով ենք պարծենում, մենք առանց խաբելու բարձր ձայնով գոչում ենք, որ Մարիամը Աստուծոյ Մայրն է, և իրաւամբ Նրա անունը պէտք է այդպէս հոչակուի, որովհետև Նա եղաւ Բանին Աստուծոյ Մայր՝ Նրա կամքին համեմատ<sup>1)</sup>, անգամ Մայր Նրան, Որ ըստ բնութեան՝ երկնքում մայր չունի Աստուած ուղարկեց իւր Որդուն և Նա ծնուեց կոնջից քարոզում է առաքեալը։ Այժմ եթէ մէկը համարձակուի ասել, թէ Նա ծնաւ Բանն Աստուած, բնական ընթացքով, Նա ոչ միայն ճշմարիտը չի ասում, այլ և ուղիղ չի հաւատում։ Որովհետև Աստուծոյ մայր ենք կոչում Սուրբ Կոյսին ոչ թէ այն պատճառով՝ որ Նա բնական ընթացքով ծնաւ Աստուածութիւնը, այլ այն պատճառով, որ Բանն-Աստուած ծնուեց Նրանից՝ երբ մարդ գարձաւ Որովհետև, լսեցէք, ասուած է։ «Ահա կոյս յղասցի և ծնցի Որդի և կոչեսցեն զանուն Կոյսա իմմանուէլ, որ թարգմանի, ընդ մեզ Աստուած։ Բայց այդ չի նշանակում, թէ օրհնարանեալ Կոյսից ստացաւ մեր Տէրը իւր առաջին սկզբնաւորութիւնը, որովհետև սկզբում Նա Հօր հետ էր, ինչպէս վկայում է Յովհաննէսը, այլ նշանակում է թէ Նրանից (կոյսից) մարմնով, ըստ իւր ողորմած կամքի, բնական ընթացքով յայանուեց Մեսիա, Որ Ինքն Աստուած է ի վերայ ամենայնին»։

Այս երկար քաղուածը ես ամբողջովին տուի, ոչ թէ այն պատճառով, որ ժամանակակից հայեցակէտով քննեմ այդ քաղուածի միջի աստուածաբարանական հայեցքները, այլ որ համեմատեմ Նրա գրուածքի ոճը Ափրահատի և Եփրեմի գրուածքի հետ, որ առաջ կարդացի, ինչ որ մենք լսեցինք Ափրահատից և Եփրեմից, այն արեւելեան աստուածաբարանների՝ իրանց մտքերը արտայայտելու բնական ձևն է. իսկ ինչ որ լսեցինք Ռաբբուլայից՝ այն

1) Ընթան. Լեհ. եւ ոչ լահ. Overbeck եր. 242, տող 46։

յունական փիլիսոփայութեան ձայնն է: Իւր մաքերը էութեան ու բնութեան և փիլիսոփայական այլ տուեալների մասին նա ապացուցանում է կանոնական երկերի բնագրից քաղելով փաստերը:

Որպէս զի ուղիղ դատաստան անենք այն միջոցների մասին, որոնցով օգտուել է Ռաբրուկան իւր մաքերը արտայայտելու համար, հարկաւոր է ոչ միայն փիլիսոփայական հմտութիւն, այլ նաև դեպի ծ-րդ դարի վէճերի ընթացքը աւելի համակրութիւն, որ եւ չունեմ: Կարծում եմ, զուցէ կասկածը այդ քարոզի ճշգութեան մասին սակաւ է, որովհետև այն ճշգութեամբ արտայայտում է Եղեսիայի մեծ եպիսկոպոսի ղեկավարութեան տակ եղող եկեղեցու դրութիւնը: Եթէ կարդանք ծննդեան համար յօրինած նրա օրհներդը, էլ չենք զարմանայ, որ նա վերջի վերջոյ հականհստորականների կողմն է անցել: Բայց Ռաբրուկան կարող էր բոլորովին անկեղծ լինել, եթիւ կոյսին մատուցւող յարգանքի իսկական աստիճանը ճշգելու վէճերին մասնակցելուց հրաժարւում էր: Ռաբրուկայի համար Ս. Կոյսը իսկապէս Աստուածածին էր (Thotokos), նա լաւ համարեց այս մասին չվիճել որովհետև կոստանդնուպօլսի ժողովուրդը սովոր էր այդպիսի հարցերը խօսակցութեան նիւթ դարձնել ձիարշաներում կամ թատրոններում որպէս վէճերի համար հետաքրքիր նիւթ: Ռաբրուկայի միաքը խիստ գործնական էր: Նա արհամարհում է թատրոնն ու ցիրկը և իւր հեղինակութեամբ արգելում էր վայրի կենդանիների զգուելի տեսարանը, ուր մարդկային արիւնը ներկում էր կրկէսը (Վարք-Overbecks 179): Նրա համար կոստանդնուպօլսոյ մթնոլորտը շատ անախորժ էր, և անկասկած, այցելելով քաղաքը, աւելի ես զօրացաւ նրա հակակրութիւնը մայրաքաղաքի ժողովրդական կրօնքի վերաբերութեամբ:

Ռաբրուկան ամենից աւելի սիրում էր կարգ կանոնը: Ժողովրդի կարծիքի ոյժի աղդեցութեան տակ նա ընտրեց հականհստորականների կողմը, բայց և հակառակ դէպքում նա հոգս էր անում կանոնաւորել իւր թեմի կեանքը: Գործնականում այդ նշանակում էր այն, ինչ որ կայ Եղեսիայում՝ նմանեցնել Անտիոքի և յունարէն խօսող մեծ կենցրօնների եկեղեցիներում եղածներին: Խնչքան ինքն կարող էր, Եղեսիան և նրա հետ մեացած ասորի քրիստոնէութիւնը իւր Ս. Գրքով, պատարագով, վարդապետութեամբ և դադափարով էլ չէր տարրերւում կայսերութեան միւս եկեղեցիներից:

Բայց զրա համար էլ նրա եկեղեցին ծանր պատիժ կրեց: Նա դադարեց ունենալ անկախ կեանք և նշանակութիւն: Ծ-րդ դարից սկսած ասորերէն խօսող քրիստոնէութիւնը դառնում է աննշան և երկրորդական: Յունական աստուածաբանութիւնը լաւ

Հը հասկացուեց և ասորերէն լաւ չէր արտայայտում: Եւ ասորիները, որքան ես նկատել եմ, անկարող էին կոստանդնուպօսլի ետևից գնալ: Քաղկեդօնի օրթոգոքութեան տեսակէտով նրանք բոլորը հերետիկոս դարձան: Ռաբրուլայի մահից յետոյ 495 թ. դժուար գտնէիք ասորերէն խօսող քրիստոնեաների համայնք, որ Բիւզանդական եկեղեցու հետ միութիւն պահած լինէր: Պարսից իշխանութեան տակ ապրողները համարեա բոլորն էլ նեստորական էին, Հոռվմայ կայսերութեան տակ ապրողները՝ միաբնակ: Ռաբրուլայի կառուցած շէնքը նրա յաջորդների ձեռքով քանդուեց: և քրիստոնէական եկեղեցու արտաքին միութիւնը արևելքում կտոր կտոր փուլ եկաւ, և էլ երբէք մի ամբողջութիւն չձուլուեց: Թարգ. ոռու. Յուսիկ Արքեպ.

## Ա. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ \*)

### 9.

Ազնիւ բարեկամ,

Ծնորհաւորում եմ Ձեր նոր բնակարանը, մատուցանելով Ձեզ բարեկամական ազուհաց իբրև նշան իմ առ Ձեզ սիրոյ և յարգութեան, որով միշտ անփոփոխ մնամ, ամենայն բարեմաղթութեամբ,

24 Հոկտ. 71.  
Մոսկուա.

Ձեր Ա. Նազարեանց

### 10.

Ազնիւ եղբայր Մելքոն,

Այսօր Քո սիրելիքը և ես նոցա հետ տօնում ենք Քո արքայական անուանակոչութեան տօնը, եւ իմ սիրտը այս ըոսպէիս խորքից շարժուած է: Ո՞հ, այս ցանկութիւնը, որ Քո բարեկամը միշտ անուցած է իւր սրտի մէջ, որ և այսօր կամի արտայայտել խօսքով, թող հասանի դէպ ի պսակ կատարման, այսուհետեւ պիտի վերանուիրուի իմ բերանից գոհութիւն և փառարանութիւն առ Ամենաբարձրեալը:

Թարման պէս ծլի ու կանաչի ուրախութեամբ քո կեանքը, նով իմ պատուամեծար Բարեկամ, մի պահապան հրեշտակ թեարկելով հովանաւորէ Քեզ. երբէք չնեղուի ցաւով Քո ազնիւ սիրտը. ոչ. պարզ ու պայծառ, որպէս այսօր, միշտ անթուղպ մնայ Քո երկինքը:

\*) Տես «Արարատ» 1946 թ. սեպտեմբ. — հոկտեմբ. եւ նախորդ համարները: